

Արամ Խաչատրյան

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ.

Բանալի բառեր- Հայկական հարց, հայասիրական շարժում, ֆրանսիացի հայասերներ, միջազգային խորհրդածողովներ, խաղաղության միջազգային համաժողով, վեհաժողով, մեծ տերություններ, որոշում, բանաձև, տեղեկագիր:

«Pro Armenia»-ի շուրջ համախմբված հայասեր գործիչները Հայկական հարցի լուծման համար լայն քարոզչություն են ծավալում ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև Արևմտյան Եվրոպայի այլ երկրներում, որտեղ նրանք բազմաթիվ համախոհներ և գաղափարակիցներ են գտնում¹: Միևնույն ժամանակ Ֆրանսիայի հայրենասերների նախաձեռնությամբ ու տարբեր երկրների նրանց համախոհների աջակցությամբ Հայկական հարցը մտնում է միջազգային խորհրդածողովների օրակարգ, որտեղ այն քննարկվում է, և ընդունվում են հայանպաստ որոշումներ:

1900 թ. սեպտեմբերի 3-ին Փարիզում, Ֆրանսիայի կառավարության հովանու ներքո իր աշխատանքներն է սկսում Խաղաղության միջազգային 9-րդ համաժողովը: Այն ուներ կիսապաշտոնական բնույթ: Բացման առթիվով ողջունի նամակներ էին ստացվել Ֆրանսիայի նախագահի անունից, արտաքին գործերի մինիստրից: Համաժողովին մասնակցում էին պատվիրակներ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Գերմանիայից, Բելգիայից, Ղանիայից, Իսպանիայից, Մեծ Բրիտանիայից, Հոլանդիայից, Հունաստանից, Հունգարիայից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Ռումինիայից, Շվեդիայից, Սերբիայից, Իտալիայից, Նորվեգիայից, Շվեյցարիայից:

Հայ պատվիրակ Հ. Առաքելյանը համաժողովի քննարկմանն է ներկայացնում «Հայկական հարցը խաղաղության տեսակետից» վերնագրով մի զեկույց-հիշատակագիր, որի տակ իրենց ստորագրություններն էին դրել տասնութ անվանի հասարակական, քաղաքական գործիչներ, գիտնականներ Է. Ռոբերտին, Լ. Ֆուայեն՝ Ֆրանսիայի խաղաղության ընկերության նախագահ, Վ. Մառլիեն՝ ազգերի մեջ իրավարար ատյան ստեղծելու ֆրանսիական ընկերության քարտուղար, պրոֆեսոր Ֆր. դը Պասսին՝ խաղաղասիրական շարժման ջատագով ու գործիչ, գիտնական-ֆիզիոլոգ, Յաֆոնտեն՝ միջազգային իրավունքի պրոֆեսոր (Բրյուսել), Վ. Սոբյեվսկին՝ «Русские ведомости» թերթի խնբագիր (Ռուսաստան), Մ. Կովալսկին՝ Ս. Պետերբուրգի ակադեմիայի թղթակից-անդամ, Գ. Նովիկովը՝ սոցիոլոգ, հրապարակախոս և այլք²: Չեկույց-հիշատակագիրն ընդունվեց համաժողովի կողմից՝ հիմք ընդունելով «Չնախատեսված հարցեր» անվամբ օրակարգի 10-րդ կետը, քննարկվեց հատուկ այդ նպատակով ձևավորված մասնաժողովում և ի վերջո ներկայացվեց համաժողովի քննարկմանը:

Սկզբում զեկույց-հիշատակագիրը ներկայացնելու համար 1900 թ. հոկտեմբերի 5-ի նիստի նախագահ Ֆր. դը Պասսին (Ֆրանսիա) խոսքը տալիս է Գ. Նովիկովին, որը ներկայացնում է հայերի դժվարին դրությունը օսմանյան կայսրությունում, ինչպես նաև այդ խնդրում մեծ տերությունների պատասխանատվության հարցը: Այնուհետև նա ներկայացրեց որոշման նախագծի՝ հատուկ դրա մշակման համար ստեղծված մասնաժողովում ընդունված տարբերակը, համաձայն որի՝ «Խաղաղութան 9-րդ համաշխարհային ժողովը, ծանօթանալով

¹ Տե՛ս Լեո, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 129:

² Տե՛ս «Դրօշակ», Հայ յերախոխական դաշնակցութեան օրգան, 1900, № 8, էջ 125-126:

պպ. Գամբարեանի, Կովալեվսկու, Սօբօլեվսկու, Լա-Ֆօնտէնի, Դը-Ռօբէրտիի, Նօվիկօվի, Լիւսիէն Լէ-Ֆուայէի, Առաքելեանի, Լօրիս-Մելիքեանի եւ ուրիշների յիշատակագրին, կարծիք է յայտնում, որ հայերի կոտորածները ներկայացնում են վերջին ժամանակներունս կատարած ամենագարշելի գործերից մէկը: Համաժողովը յայտնում է իր համակրութիւնը այս դժբախտ ժողովրդին եւ փափաքում է, որ տաճկական կառավարութիւնը հարկադրի յարգել հայերի անժխտելի իրաւունքները, որոնք երաշխաւորած են Բերլինի դաշնագրով»¹:

Գ. Նովիկովի առաջարկած որոշման նախագծի դեմ առարկում է Ֆրանսիայի պատվիրակ դը Ռոբերտին: Նա այն համարում է թույլ՝ համեմատելով այն իրական վիճակի հետ, որի մեջ գտնվում են հայերը: «Այն դժբախտ հարցը, որ յայտնի է «հայկական հարց» նունով,-հայտարարում է նա,-ինձ թւում է, որ պահանջում է մեզանից աւելի խիստ որոշում, քան մասնաժողովի կողմից մեզ առաջարկածը»²:

Համաժողովում ելույթներ են ունենում պրոֆեսոր Լ. Մառիլիեն, Ա. Չոպանյանը, Մ. Հովհաննիսյանը և այլք:

Հակահամիդյան շարժման ներկայացուցիչներից մեկը՝ «Մեշվերեթ» լրագրի խմբագիր Ա. Ռիզան գտնում էր, որ համաժողովը չպետք է զբաղվի Օսմանյան կայսրության առանձին ժողովուրդների խնդիրներով, քանի որ «այնտեղ պայմանները բոլոր ազգութիւնների համար միևնոյն են»: Ըստ նրա՝ հայերի համար առանձնաբար բարենորոգումների խնդրի առաջաշումն անիմաստ էր, քանի որ իբր թէ կայսրության որևէ հատվածում նրանք մեծամասնություն չէին կազմում³: Նա առաջարկում է մասնաժողովին մերժել Ե. Դը Ռոբերտիի նախագիծը, փոխարենը ընդունել որոշման իր նախագիծը. «Համաժողովը ցաւում է, որ մեծ պետութիւնները փոխանակ նպաստելու ընդհանուր բարենորոգումների իրագործմանը Տաճկաստանում, առանց խտրութեան ազգի և կրօնի, պաշտպանել և պաշտպանում են կամայական ռէժիմը մի սուլթանի, որ սիստէմատիքաբար հակառակում է քաղաքական և հասարակական ունէ բարելաւութեան և որը իսկական պատճառն է այն վարչական անկարգութիւնների և դժբախտութիւնների, որոնք ճնշում են մուսուլմաններին նոյն չափով, ինչ չափով և քրիստոնէաներին»⁴:

Պրոֆեսոր Լ. Մառիլիեն իր ելույթում մերժում էր Ա. Ռիզայի առաջարկությունը՝ շեշտելով, որ հայերի դրությունը բարենորոգումների անհապաղ գործարարություն է պահանջում, իսկ Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումների անցկացումը կպահանջի անորոշ երկար ժամանակ⁵: Մ. Հովհաննիսյանն իր ելույթում կոչ էր անում իրատեսորեն գնահատել թուրք և հայ բնակչության կացությունը, քանի որ թուրքերը լիակատար օգտվում են իրենց իրավունքներից և հատկապես ունեն կյանքի և ունեցվածքի ապահովություն, իսկ Հայաստանում տեղի են ունենում պարբերական կոտորածներ, և հայությունը «խաղաղ և անզէն-մատնած է Կարմիր հրէշի գազանութիւններին»⁶: «Անահիտ» հանդեսի խմբագիր Ա. Չոպանյանն իր ելույթում նշեց, որ Ա. Ռիզան իր առաջարկությամբ փորձում է խանգարել հայերին, ուստի ինքն այլևս նրան նույն հարգանքով չի վերաբերվելու, ինչ նախկինում⁷:

Համաժողովն իր որոշումները կոչի ձևով հրատարակել է և ապա ուղարկել Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեին, որը իր հերթին պետք է ուղարկեր եվրոպական բոլոր երկրներին⁸:

¹ Տե՛ս «Դրօշակ», 1900, № 8, էջ 126:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 127:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 127-128:

⁶ Նույն տեղում, էջ 128:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս նույն տեղում:

Հայկական հարցը քննարկվեց նաև 1901 թ. սեպտեմբերի 10-ից 13-ը Քլազգոյում տեղի ունեցած Խաղաղության միջազգային 10-րդ համաժողովում¹: Ներկա են եղել պատվիրակներ Ֆրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից, Ավստրիայից, Շվեյցարիայից, Հոլանդիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից, Իսպանիայից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Նորվեգիայից, մոտավորապես 500 մարդ²:

Հայկական հարցը քննարկվել է երկրորդ նիստում: Հարցի քննարկմանը մասնակցել են ֆրանսիացի, անգլիացի, հայ և ռուս միսիոներներ:

Նիստում ընթերցվել է Բեռնի խաղաղության միջազգային մնայուն բյուրոյի 1900-1901 թթ. տեղեկագրի՝ Հայկական հարցին վերաբերող հատվածը («Եւրօպական մեծ պետութիւնները մի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին մարդկութեան, եթէ, համաձայն այն հրավերին, որ նրանց տրուեց խաղաղութեան IX համաշխարհային կօնգրէսի կողմից, նրանք յատուկ միջոցներ ձեռք առնէին ստիպելու թիւրք կառավարութիւնը ընդունել հայոց հարցի արմատական և ըրացիոնալ լուծումը»³) և արևմտահայերի դրության մասին ֆրանսերեն լեզվով մի գեկուցագիր⁴:

Հայկական հարցին նվիրված նիստը նախագահել է դոկտոր Սպ. Վատսոնը: Սեպտեմբերի 11-ին գեկուցումով հանդես է եկել նախօրոք հարցն ուսումնասիրած այժմեական կամ առօրյական խնդիրների հանձնաժողովի (Commission des actualites) նախագահ, Ռուսաստանի պատվիրակ, սոցիոլոգ Գ. Նովիկովը՝ ներկայացնելով այժմեական հանձնաժողովի բանաձևը: Այնտեղ ներկայացվում էր արևմտահայերի վիճակը և ասվում. «Եւրօպական պետութիւնների մէջ տիրող գժտութիւնն ու անհամաձայնութիւնը և միմեանց դէմ տածած անվստահութիւնը առաջ բերին այն սոսկալի աղէտները, որոնց ենթակայ են այսօր քրիստոնէայ հայերը. ամէն մի ազգ վախենում է, որ չլինի թէ թիւրքաց պետութիւնը բաժան-բաժան լինի և ինքն լաւ պատառ չըստանայ»⁵:

Ասվում էր նաև, որ նախորդ՝ Փարիզի համաժողովը հայերի մասով միայն «իղձ և փափագ յայտնեց», որը բավարար չէ խնդիրներին լուծում տալու համար: Անհրաժեշտ է ուղղակիորեն դիմել մեծ տերութիւններին՝ Հայկական հարցը լուծելու համար գումարելու հատուկ խորհրդաժողով: Որպես հիմք պետք է ընդունվեր հրապարակախոս Հ. Առաքելյանի տեղեկագիրը, որտեղ ներկայացված է հայության վիճակը և բաժանվել էր համաժողովի անդամներին⁶:

Նիստն ընթացել է բուռն բանավեճերով: Ելույթ ունեցողներից մեկը, թեև համակրություն էր հայտնում հայերի դատին, բայց փորձում էր հիմնավորել, թե հայերի խնդիրների լուծումը հնարավոր կլինի միայն զենքի ուժով, իսկ համաժողովի նպատակը համաշխարհային խաղաղությունն է: Այլք նման հարցադրումը համարում էին «ամոթալի»: Հ. Առաքելյանն իր ելույթում զարմանք հայտնեց, որ նման «լուսավոր» համաժողովը կարող է նման կերպ վերաբերվել խնդրին և հավելեց, որ իրենց առաջարկը չի վերաբերում բացառապես զենքի ուժով խնդիրը լուծելուն, այլ միայն սուլթանի վրա մեծ տերութիւնների վրա ճնշում բանեցնելուն, որպեսզի նա իրականացնի խոստացած բարենորոգումները: Այդ առիթով նա նշում էր, որ Հայկական հարցը միջազգային բնույթ ունի, Օսմանյան կայսրության ներքին կյանքին չի վերաբերում⁷:

Ի վերջո, համաժողովի մեծամասնությունը կողմ է արտահայտվում այժմեական հանձնաժողովի առաջարկած բանաձևին⁸: Որոշման առաջարկված նախագիծն ընդունվում է մեծամասնությամբ. «Խաղաղութեան 10-րդ

¹ Տե՛ս նույն տեղում, 1901, № 7, էջ 126-128:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 126:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 127:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

Համաշխարհային ժողովը, գումարած Գլասգովում, 1901 թվի սեպտեմբերին, տեղեկանալով Բերլինի Միջազգային խաղաղութեան մնայուն բիւրօյի զեկուցման, մի յիշատակագրի հայերի ներկայ վիճակի մասին թիրքիայում՝ ներկայացած՝ հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեանի միջոցով, եւ մի նամակի Միացեալ Նահանգների խաղաղութեան ընկերութիւնների կողմից¹ :

Նկատելով, որ հայ ժողովրդի տխուր դրութիւնը բնաւ չէ բարելաւուել, որ կոտորածները եւ խժոժութիւնները շարունակուում են Հայաստանում, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող եվրոպական պետութիւնները ո՛չ մի հաւաքական ջանք չեն արել վերջ դնելու այս դժբախտ քրիստոնեայ ազգի վերաբերմամբ սխտէմատիքաբար կատարուող անգթութիւններին,-

Վճռում է՝

Ուղարկել Բերլինի դաշնագիրը ստորագրող եվրոպական պետութիւններին մի խնդրագիր, որպէսզի նրանք մի պաշտօնական կօնֆէրանս գումարեն՝ վճռելու համար հայկական հարցը՝ գործադրելով 1895-ի մայիսի բարենորոգումների ծրագիրը, որ մշակել են անգլիական, ֆրանսիական ու ռուսական կառավարութիւնները եւ ընդունել է նույնիսկ սուլթանի կողմից»²:

Համաժողովը հանձնարարեց Բեռնի խաղաղութեան միջազգային մնայուն բյուրոյին, Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետութիւններին ուղարկել դիմում՝ Հայկական հարցը լուծելու և ի մասնավորի 1895 թ. բարենորոգումների ծրագիրը կենսագործելու և պաշտոնական վեհաժողովով գումարելու համար: Հանձնարարութեան հիման վրա Բյուրոն հոկտեմբերի 3-ին Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարներին հղում է համապատասխան դիմում: Ասվում էր, որ դիմումի նպատակն է, որ «կայացւի պաշտօնական կօնֆէրանս հայկական հարցը վճռելու համար, իրագործելով 1895-ի ռէֆօրմների ծրագիրը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կիրառութիւն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, որ վաւերուում է Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածի»³:

Դիմումում հիմնավորվում էր, որ Հայկական հարցը միջազգային բնույթ ունի, քանի որ սուլթանը մեծ տերութիւնների առաջ պարտավորութիւն է ստանձնել անհապաղ բարենորոգումներ իրականացնելու «հայաբնակ գաւառներում», երաշխավորել հայերի ապահովութիւնը և պարբերաբար տերութիւններին զեկուցել իրականացված համապատասխան միջոցառումների մասին: Սակայն սուլթանը որևէ քայլ այդ ուղղությամբ չի իրականացրել, շարունակել է հայերի կոտորածների կազմակերպումը, ուստի «անհնարին է թուում, որ հայերի ապահովութիւնը երաշխաւորող պետութիւնները այլևս անգործօն մնան»⁴:

Հայկական հարցը արծարծվեց նաև Խաղաղութեան միջազգային 11-րդ համաժողովում, որը տեղի է ունեցել 1902 թ. ապրիլին Մոնակոյում: Հայկական հարցի առաջադրողն ու ջատագովը «Pro Armenia»-ի խմբագիր Պ. Քիյարն էր, որը լիազորված էր ու ներկայացնում էր «Եվրոպայի հայ ուսանողական միութիւնը»⁵: Պ. Քիյարի ելույթը հայկական հարցի մասին արժանանում է ջերմ ընդունելութեան համաժողովի մասնակիցների և մամուլի կողմից: Այնուհետև քվեարկութեան է դրվում Պ. Քիյարի կազմած և նախապես մասնաժողովում քննարկված բանաձևը, որում ասվում էր. «Համաշխարհային խաղաղութեան 11-րդ Համաժողովը կրկնելով 9-րդ եւ 10-րդ համաժողովների ցանկութիւնները.

1. Թախանձանօք խնդրում է Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից, գումարել մի պաշտօնական խորհրդաժողով Հաագի մէջ եւ լուծում

¹ Այդ ժամանակ ԱՄՆ-ում խաղաղութեան ընկերութիւնները նախագահին դիմելու համար մի ժողովրդական ուղերձ էին պատրաստում՝ առաջարկելով, որ նա հայկական հարցը լուծելու համար նախաձեռնի տերութիւնների վեհաժողովի գումարում: Տե՛ս նույն տեղում, էջ 127:

² Նույն տեղում, էջ 128:

³ Նույն տեղում, 1901, № 7, յաւելած, էջ 1:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, 1902, № 4, էջ 52:

տալ հայկական հարցին՝ գործադրելով 1895-ի մայիսեան ռէֆորմների ծրագիրը:

2. Եւ, նկատելով, որ նոր կոտորածներ են սպասվում Սասունի կողմերում, խնդրում է միեւնոյն պետութիւններից՝ ուղարկել Մուշ, սրա հարեւան քաղաքների իրենց հիւպատոսներին, քանի որ սոսկ Եւրօպացի պաշտօնական վկաների ներկայութիւնը բաւական է՝ արգելելու համար արիւնոտ անցքերի կրկնումը»¹:

Ուշագրավ ելույթ է ունենում դանիացի տնտեսագետ Ֆրեդերիկսենը, որը հետևյալ կտրուկ հայտարարություն է անում. «Պատերազմը օրինաւոր կըլինէր սուլթանին խելքի բերելու համար»²:

Այս համաժողովի արդյունքը եղավ այն, որ նրա երաշխավորությունները հաշվի առնելով՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ավելացրել են իրենց հյուպատոսների քանակն Արևմտյան Հայաստանում³: Ի դեպ, Ֆրանսիայում նման որոշման վրա ազդեցություն թողեց մի խումբ պատգամավորների, կառավարությանն ու արտաքին գործերի նախարար Դելկասէին արված դիմումները, որտեղ նրանք այնպես էին հյուպատոսների թիվը Արևմտյան Հայաստանում ավելացնել՝ այդ քայլը հիմնավորելով այն իրողությամբ, որ նախկինում տեղի ունեցած հայերի կոտորածներին ֆրանսիացիները վկա չեն ունեցել⁴:

1903 թ. սեպտեմբերի 26-28-ին Ֆրանսիայի Ռուան քաղաքում գումարվում է Խաղաղության միջազգային 12-րդ համաժողովը: Այս անգամ էլ քննարկվում է Հայկական հարցը և ընդունվում նույնաբնույթ բանաձև նախորդ համաժողովների ոգով: Բանաձևում հյուպատոսների թվի ավելացումը դիտվում էր միայն հայկական կոտորածները ժամանակավորապես կանխելու հնարավորություն: Այնուհետև ասվում էր. «...Համոզւած լինելով, որ հայերի պահանջած ռէֆորմներն ու երաշխաւորութիւնները կարող են իրագործել առանց բանաւ վնասելու Թիւրքիայի ամբողջութեանը եւ որ հէնց իրենց, թիւրք ազգաբնակութեան, շահը պահանջում է յարիլ բարենորոգման այդ գործին.

- Յենւելով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի վրայ, որով Եւրօպան իրաւունք է ստացել եւ յանձնառու է եղել՝ ապահովել հայ ազգաբնակութեան կեանքը, երթեւեկութեան ազատութիւնը, իրենց գոյքի խաղաղ վայելումը եւ խղճի ազատութիւնը.

- Հայտարարում է, որ ժամանակ է՝ յանուն Եւրօպայի պատւի եւ մարդկութեան բարեկեցութեան, որ այդ յօդուածը ստանայ լիակատար եւ օրինական գործադրութիւն.

- Եւ իրաւիրում է քաղաքակրթւած կառավարութիւններին ու ժողովուրդներին՝ աշխատել անյապաղ 1895 թւի մէնօրանդումի մտքով, համերաշխութեամբ վերջ դնել իրերի մի անտանելի կացութեան, որ վտանգաւոր է ընդհանուր խաղաղութեան համար»⁵:

1903 թ. հոկտեմբերի 25-ին ֆրանսիացի հայասերների կոմիտեն Փարիզում նախաձեռնել էր միջազգային խորհրդաժողով՝ Արևելյան հարցի մասին: Խորհրդաժողովին մասնակցելու էին ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, բելգիացի և հոլլանդացի ականավոր քաղաքական գործիչներ և, ի մասնավորի, դ'Էստուրնել դը Կոնստանը, Ֆր. դը Պրեսանսեն, Ժ. Ժորեսը, Ֆր. դը Պասսին⁶: Խորհրդաժողովը («ցույց») տեղի ունեցավ Փարիզի «Օտել Կոնտինենտալ»-ում, որին մասնակցում էին շուրջ 60 եվրոպացի պատգամավորներ: Նախագահում էր Ֆր. դը Պասսին: Նույն օրը երեկոյան Սարա Բերնար թատ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, № 7, էջ 98, 1903, № 8, էջ 126:

⁴ Տե՛ս նույն տեղում, 1902, № 7, էջ 110:

⁵ Նույն տեղում, 1903, № 8, էջ 126:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

րոնում տեղի է ունեցել մեծ հանրահավաք, որտեղ հնչել են հայանպաստ ելույթներ և առաջին հերթին ֆրանսիացի հայասերների բերանից¹:

1904 և 1905 թթ. Խաղաղության միջազգային 14-րդ և 15-րդ համաժողովներում հայկական դատի պաշտպանի դերում հանդես եկավ Պ. Քիյարը: Համաժողովների ընդունած բանաձևերում շեշտվում էր Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետությունների՝ 61-րդ հոդվածի գործադրության, այն է՝ բարենորոգումների իրականացման պատասխանատվությունը²:

Խաղաղության միջազգային 15-րդ համաժողովը, որի ընթացքում Հայկական հարցը լայնորեն քննարկվել է, տեղի է ունեցել Միլանում 1906 թ. սեպտեմբերի 15-22-ին: Մասնակցել են հարյուրավոր պատգամավորներ, գիտնականներ, հրապարակախոսներ, հասարակական-քաղաքական գործիչներ Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Բելգիայից, Իտալիայից և այլ երկրներից: Պ. Քիյարը ներկայացրել է «Եվրոպայի Հայ Ուսանողության միությունը»: «Pro Armenia»-ի խմբագրապետը Հայկական հարցի մասին իր ելույթում նկարագրել է արևմտահայերի վիճակը, հաստատել այն իրողությունը, որ ռուսական ցարն ու թուրքաց սուլթանը հայ ժողովրդի հանդեպ գործադրում են հալածանքների նույն եղանակը, շեշտել միջազգային պայմանագրերի գործադրման անհետաձգելի անհրաժեշտությունը³:

Համաժողովում միաձայն ընդունվել է հետևյալ որոշումը. «Հայաստան. Խաղաղութեան միջազգային 15-րդ կոնգրէսն կը բողոքէ տկար ժողովուրդներու վրայ ի գործ դրած բոլոր ճնշումներու դէմ, որոնք ի գործ կը դրին ազգային իրաւունքներու և պետական շահերու պատրւակի տակ և նկատելով որ չկա իսկական խաղաղութիւն, եթէ անիկա չէ հիմնւած արդարութեան և միջազգային խոստումներու յարգանքի վրայ,

Բարձրաձայն կը յայտարարէ՝ որ Բեռլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններու հրամայողական պարտականութիւնն է, վերջապէս, գործադրել տալ նոյն դաշնագրի 23 և 61 յօդուածներով կանխատեսուած և 1895-ի մայիսեան յիշատակագրով սահմանաւորուած բարենորոգումները»⁴:

Խաղաղության համաժողովներից բացի՝ Հայկական հարցը քննարկվել ու համապատասխան վերաբերմունքի է արժանացել այլ միջազգային հավաքներում, ինչպես օրինակ՝ հայամետ ու հայասեր գործիչների առաջին կոնգրեսում: Այն բացվել է 1902 թ. հուլիսի 17-ին Բրյուսելում: Սուլթանը, նախապես տեղեկանալով բացվելիք կոնգրեսի մասին, փորձել է խափանել այն, բայց նրան չի հաջողվել⁵: Կոնգրեսին մասնակցել են 150 հոգի: Դրա հրավիրման ու ընթացիկ աշխատանքների կազմակերպման մեջ հատկապես մեծ ավանդ ունեին ֆրանսիացի հայասերները՝ Պ. Քիյարը, Ժ. Ժորեսը, Ֆր. դը Պրեսանսեն, տիկ. Սևրինը, Էլիզե Ռեկյուն, ինչպես նաև Հեկտոր Դենին, Լազար Բերնարը, Ժան Լոնգը, Ֆյուրնեմանը, Բերտրանը և այլք: Կոնգրեսի հասցեով համակրական նամակներ ու հեռագրեր են ստացվել ֆրանսիացի այն հայասերներից, որոնք այս կամ այն պատճառով չեն կարողացել ներկա լինել (Ժ. Կլեմանսո, Է. դը Կոնստան)⁶: Կոնգրեսը բացվել է նախագահ Գուզո դը Լեհեի ելույթով. «Մեր կոնգրէսը միջազգային արդարութեան գործ է: Մենք բոլորս ձգտում ենք այն բանի, որպէսզի կուլտուրական ազգերը օրէնքի պահապանները լինեն, օգուտ քաղելով իրենց ոյժից ոչ միայն նեղ-ազգայնական նպատակների համար, այլև նրա համար, որ ստիպեն իրենց պարտաւորութիւնները հպատակների առաջ մոռացող կառաւարութիւններին՝ յարգել քաղաքակրթութեան ավանդույթները»⁷:

¹ Տե՛ս նույն տեղում, № 9, էջ 151-152:

² Տե՛ս նույն տեղում, 1905, № 10, էջ 158-159:

³ Տե՛ս նույն տեղում, 1906, № 10, էջ 147:

⁴ Նույն տեղում, էջ 147-148:

⁵ Տե՛ս «Մուրճ», 1902, № 7, էջ 236-237:

⁶ Տե՛ս «Դրօշակ», 1902, № 7, էջ 98-99:

⁷ «Մուրճ», 1902, № 7, էջ 237:

Հայկական հարցի վերաբերյալ ելույթ է ունենում «Pro Armenia»-ի խմբագրապետ Պ. Քիյարը: Նա իր խոսքում մերժում է հայ ժողովրդի վաշխառու ժողովուրդ լինելու կարծիքը. «Հայ ազգաբնակչության 90% գյուղացիներն են կազմում»: Նա անհիմն է համարում հայ ժողովրդի թվաքանակի վերաբերյալ դատողությունները. ոմանք ասում են, որ հայերը 3 միլիոն են 12 միլիոն թուրքերի մեջ, բայց բանախոսը ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ հայ «ազգաբնակչությունը խմբուած է որոշ շրջաններում և միայն շրջապատուած է թիւրք հարեւանների ծովով»¹: Պ. Քիյարը կոնգրեսին ներկայացնում է Հայկական հարցի լուծման վերաբերյալ երեք տարբերակ.

1. հայերի լիակատար բնաջնջում,
2. Հայաստանի միացում Ռուսաստանին,
3. վարչական բարեփոխումներ:

Նա գտնում է, որ հայ ժողովրդին փրկելու միակ ուղին վարչական բարեփոխումներ գործադրելն է: Նրա զեկուցման մեջ նոր դրույթն այն է, որ անհրաժեշտ է համարում Հայաստանում նշանակել եվրոպական չեզոք ազգության պատկանող գործիչ²:

Կոնգրեսում ազդեցիկ ելույթներով հանդես են գալիս նաև Ժ. Ժորեսը, Ֆր. դը Պրեսանսեն, տիկ. Սևրինը, որոնք որերորդ անգամ հայ ժողովրդի փրկությունը տեսնում են բարենորոգումների գործադրման մեջ: «Մենք բոլորս յանցաւոր ենք հայերի առաջ: Ամօթ է կառավարութիւնների անգործութիւնը պատրուակ բերել, որովհետեւ կառավարութիւնները մեր մարմնից են և մեր ոգուց: Եթէ եւրօպական ազգերը անկեղծ ոգեւորուէին հայերին օգնելու գաղափարով, կառավարութիւնները չէին յապաղի նրանց հետեւելու», - հայտարարեց իր ելույթում Ժ. Ժորեսը³: Տիկ. Սևրինը իր ելույթում դատապարտում է հատկապես մամուլի դիրքը, որը քար լռութիւն է պահպանում հայկական սարսափների հանդէպ: Կոնգրեսի ավարտից հետո տիկ. Սևրինը «La Journal» թերթում տպագրում է հայասիրական մի կրթոտ զայրալից հոդված՝ ձեռքի տակ ունենալով «Եվրոպայի Հայ Ուսանողների միության» դիմումը՝ Հայաստանի կոնգրեսին ուղղված: Նա մերկացնում էր անտարբերության ու լռութեան անթափանց քողը, որ պատել էր հայերի ողբերգությունը⁴:

Հայաստանի առաջին կոնգրեսի որոշումը, շեշտելով Օսմանյան կայսրության ամբողջականության անձեռնմխելիությունը, նշում է «Եւրօպայի և մարդկութեան պատուի համար հասել է ժամանակը, որ այդ յօդուածը (խոսքը Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի մասին է-Ա.Խ.) լիակատար և ճիշտ իրագործումն ստանայ»⁵:

Կոնգրեսը կոչ է անում մասնակից երկրների պառլամենտների պատվիրակներին իրենց երկրների կառավարություններին հարկադրել ավելացնելու հյուպատոսական գործակալների թիվը Օսմանյան կայսրութիւնում, ինչպես որ դա արել են Ֆրանսիան ու Ռուսաստանը: Միաժամանակ կոնգրեսը հանձնարարում է եվրոպական երկրների մամուլին հրատարակել ու տարածել հայասիրական կոնգրեսի որոշումները⁶:

Հայկական քաղաքական շրջանները բարձր գնահատեցին կոնգրեսի աշխատանքները: «Բոյուսելի կոնգրեսը «Pro Armenia»-ի հիմնադրութիւնից ի վեր դա առաջին նշանավոր փորձն է՝ կենտրոնացնելու ցիրցան ուժերը և ստեղծելու ի նպաստ հայերի միջազգային ամբողջական մի շարժում», - գրել է «Դրոշակ» առաջնորդողը և զգուշացրել՝ «չը յափշտակենք»⁷: «Դրոշակ»-ի

¹ Նույն տեղում, էջ 238:

² Տե՛ս «Դրոշակ», 1902, № 7, էջ 109, «Մուրճ», 1902, № 7, էջ 238:

³ «Մուրճ», 1902, № 7, էջ 238:

⁴ Տե՛ս «Դրոշակ», 1902, № 8, էջ 126-127:

⁵ «Մուրճ», 1902, № 7, էջ 239:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ «Դրոշակ», 1902, № 7, էջ 78:

խմբագրությունը Հնչակյան կուսակցության կենտրոնի հետ համատեղ երախտագիտությամբ համակված ուղերձ-կոչ է հղել կոնգրեսին¹: Իսկ «Մուրճի» տեսաբանը, թվարկելով կոնգրեսի որոշումները և դրվատելով կատարվածը, գրում է. «Սակայն այս բոլորը դեռևս ավելի պլատոնական, քան գործնական նշանակություն ունի. թեև անտարակույս է այդ բուռն հասարակական բողոքի ազդեցությունը նաև Եվրոպական դիպլոմատների վրա»²:

Պետք է նշել, որ հայկական իրականության մեջ հայասիրական շարժումը գերազնահատելու փորձեր եղել են, որի պատճառով առավել սթափ մտածող գործիչները զգուշացնում էին, որ դրանից կուռք դարձնելը վտանգավոր է. «մեր յախտենական լավանները, մեր անկեղծ ու կեղծաւոր խաղաղականները ստրկամտութեամբ գլուխ կը ծռեն այդ կուռքի (իմա՛հ հայասիրական շարժման-Ա.Խ.) առաջ և այսուհետև գուցէ աւելի յանդուգն ու ամբարտաւան՝ կը գոչեն յեղափոխականներին. «Զէնքը ցած դրէք. մենք հանգիստ մնանք, հայասէրները կը հոգան, Բրիւսէլի Յանձնաժողովը ամէն ինչ կը կարգադրէ»...: Զգուշանա՛նք, եթէ չենք ուզում վերստին մատնել ձակատագրի դաժան խաղերին: Հայասէր շարժումը մեծ, սփոփիչ երևոյթ է մեր իրականութեան մէջ,- այդ մենք քանիցս շեշտել ենք արդէն: Եւրոպական պրոպագանդը անպայման անհրաժեշտ է՝ թէ նոր աղետների առաջն առնելու համար և թէ մեր դատը կենդանի պահելու դիւանագիտական սեղանի վրայ»³:

Կոնգրեսը որոշում է ընդունել ընտրել հանձնաժողով, որ կարողանա կապ հաստատել տարբեր երկրներում գործող հայասիրական կազմակերպությունների հետ, համադրելու նրանց աշխատանքները: Իսկ աշխատանքները տարվելու էին միայն քարոզչության միջոցով՝ «բացառապէս մարդասիրական հողի վրա»: Պ. Քիյարը ընտրվել է մնայուն կոմիտեի նախագահ՝ կապ հաստատելու համար հանձնաժողովի անդամների միջև: Հանձնաժողովի կազմում Ֆրանսիայից ընդգրկվել են Կոշեն, Կոնստանը, Սամբանը, Պրեսանսեն, Լավիսը, Վալէյը⁴:

Հայկական հարցի ուշագրավ քննարկում է տեղի ունեցել Մարդու Իրավունքների Պաշտպանության Լիգայի համագումարում, որը բացվել է 1904 թ. մարտի 31-ին և ավարտվել ապրիլի 2-ին Փարիզում: Լիգան ունեցել է 40 հազ. անդամ⁵: Այս համագումարում ևս նշանակալից մասնակցություն են ունեցել ֆրանսիացի հայասերները: Նախագահել է Ֆր. դը Պրեսանսեն, որի ներկայացրած օրակարգը Հայաստանի և Մակեդոնիայի վերաբերյալ հաստատվել է: Նախագահողը բանախոսել է առաջադրած օրակարգի մասին: Նա հանգամանալից ներկայացրել է հայ ժողովրդի և Մակեդոնիայի աղետալի կացությունը, ապստամբություններով հղի իրադրությունը, սուլթանի ավելի քան քառորդ դար ձգձգվող քաղաքականությունը: Բանախոսը հայտարարել է, որ սուլթանը ծաղրում է Եվրոպային և հիմնավորում իր առաջարկած որոշման նախագիծը, որը զետեղում ենք ստորև:

«Մարդու Իրավունքների Պաշտպանության Լիգայի համագումարը, նկատի ունենալով Օսմանյան կայսրության կողմից Եվրոպայի առջև և Եվրոպայի կողմից Օսմանյան կայսրության ճնշված հպատակների առջև վերցրած բազում պարտականությունները, հաշվի առնելով այն վտանգները, որոնք սպառնում են խաղաղությանը Մակեդոնիայում և Հայաստանում նոր ապստամբությունների բռնկումով և այս հուսալքված ժողովրդների կողմից նման ծայրահեղ միջոցներին դիմելուց խուսափելու անհնարիությունը պահանջում է, պայմանագրերի (մասնավորապես 1878 թ.) կատարում, ուղղված բարենորոգումների

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 110-112:

² Մուրճ, 1902, № 7, էջ 240:

³ «Դրոշակ», 1902, № 7, էջ 98:

⁴ Տե՛ս «Դրոշակ», 1902, № 7, էջ 109:

⁵ Տե՛ս «Pro-Armenia», 1904, № 83, pp. 483-484.

գործադրմանը և Եվրոպական վերահսկողության հաստատմանը, առանց որի ցանկացած ենթադրելի բարելավում լոկ պատրանք է և ծուղակ»¹:

Նախագահի առաջարկած որոշման կապակցությամբ ուշագրավ լրացում է առաջարկում ֆրանսիացի պատվիրակ Լուսիեն դը Ֆուայեն: «Կարծում եմ, որ ճիշտ կլիներ, որ մենք, հենվելով մեզ համար սրբազան սկզբունքի վրա, նշեինք, որ ազգերի իրավունքը տնօրինելու իրենց ճակատագիրը, անքակտելի է, որ մենք հաստատում ենք, որ ինչպես կոլեկտիվ ստրկությունը, այնպես էլ անհատականը վերացված է և որ ոչ ոք իրավունք չունի որևէ հանրության ստրկական լծի տակ պահել», -իր ելույթում առաջարկում է նա: Մարդու իրավունքների Պաշտպանության Լիգայում հանդես եկավ «Pro Armenia»-ի խմբագրապետ Պ. Քիյարը: Նա կարևորեց Իտալիայի և Անգլիայի դաշնության դերը հայկական ու մակեդոնական հարցերի դրական լուծման գործում: Առաջարկեց իբրև լրացում որոշման մեջ մտցնել այդ պարագան: Պ. Քիյարը խստորեն քննադատեց ռուսական իշխանություններին նրանց կողմից կիրառվող հակահայկական ձեռնարկումների համար²:

Վերոհիշյալ պահանջ-առաջարկությունը ընդունվել է Լ. դը Ֆուայեի և Պ. Քիյարի լրացումներով³:

«Արևելյան Հարցի Միջազգային միությունը» 1906 թ. Լոնդոնում հրավիրել է կոնֆերանս, որի ընթացքում քննարկվել է Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս Հայկական հարցը: Նախագահել է Ֆրանսիայի սենատի անդամ, հայտնի հայասեր դ'Էստուրնել դը Կոնստանը: Մասնակցել են ֆրանսիացի հայասերներ Պ. Քիյարը, Ժ. Լոնգը, նաև Լ. Վիլլարին (Իտալիա), Ս. Ստիվենսոնը, Ն. Բեքստոնը, դոկտոր Ռեյնոլդսը, կանոնիկոս Մակ-Կոլը, լորդ Մոնկվերը, Սերբիայի դեսպանը և ուրիշներ: Ստացվել են մի շարք հայասեր գործիչների համակրական նամակներ, որոնք անձամբ չէին կարողացել մասնակցել ժողովին: Ժողովի որոշումը իր բովանդակությամբ կրկնում է նախորդների որոշումները. հարկադրել սուլթանին գործադրելու միջազգային փաստաթղթերով նախատեսված բարենորոգումները, մի տարբերությամբ՝ Եվրոպական երկրներին հավելվել է Ամերիկայի Միացյալ Նահանգները⁴:

1906 թ. հուլիսի 23-ին Լոնդոնում բացվում է միջպառլամենտական ժողով, որին մասնակցել են տարբեր երկրներից ժամանած 600 պատգամավորներ, այդ թվում՝ Ֆրանսիայից դ'Էստուրնել դը Կոնստանը, որը ժողովի փոխնախագահն էր և Ֆր. դը Պրեսանսեն: Հայկական հարցը ներկայացրել է Բելգիայի խորհրդարանի պատգամավոր Ժորժ Լորանը: Ժ. Լորանի ելույթի եզրակացությունն այն է, որ հայկական դատը անհրաժեշտ է ներկայացնել Լահեի ատյանին՝ ելնելով Բեռլինի 61-րդ հոդվածի ու 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի միջազգային բնույթից: Չնայած նախագահողի առարկությանը՝ ժողովը միաձայն քվեարկել է Ժ. Լորանի առաջարկության օգտին⁵:

Հայկական հարցը, հատկապես ֆրանսիացի հայասերների աջակցությամբ քննարկման նյութ դարձնելու փորձ եղավ 1907 թ. Հաագայի խաղաղության երկրորդ կոնգրեսում: Հայկական կողմից կոնգրեսի աշխատանքներին մասնակցել էին երկու պատվիրակություններ: Մեկը Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակությունն էր, որի կազմում ընդգրկված էին Եվրոպայի հոգևոր առաջնորդ Գևորգ Եպիսկոպոս Ութուճյանը, Ավ. Ահարոնյանը, Հ. Շահնազարը, մյուսը՝ բաղկացած էր բացառապես ֆրանսիացի հայասերներից («Revue de Paris»-ի խմբագիր Վիկտոր Բերար, «Pro Armenia»-ի խմբագիր Պիյեր Քիյար, Անատոլ Ֆրանս, Ֆրենսիս դը Պրեսանսե): Վերջին երկուսը չեն կարողացել

¹ Նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, № 129, p. 865, «Պրոշակ», 1906, № 3, էջ 47-48:

⁵ Տե՛ս «Պրոշակ», 1906, № 8, էջ 114-115:

ներկա գտնվել և անձամբ մասնակցել կոնգրեսի աշխատանքներին և իրենց անունից հանդես գալու համար լիազորել են Բերարին և Քիյարին¹:

1907 թ. օգոստոսի 7-ին պատվիրակությունները հասնում են Հաագա, առանձին-առանձին կոնգրեսին ներկայացնում իրենց բողոքագրերը և խնդրում, որպեսզի դրանք քննարկվեն կոնգրեսում: Հայկական պատվիրակությունը իր բողոքագիրը հանձնում է Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ավստրիայի, Հունգարիայի ներկայացուցիչներին: Բացի այդ՝ խնդրվում է տրամադրել առանձին ունկնդրություն հայ ժողովրդի արդի կացության վերաբերյալ տեղեկություններ տալու նպատակով²:

Հաագային խաղաղության երկրորդ վեհաժողովին իրենց պարտքը համարեցին դիմել նաև Ֆրանսիայի հայասերներ Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դը Պրեսանսեն և Պիեռ Քիյարը՝ ներկայացնելով հայերի ծանր վիճակը, հիշեցնելով մեծ տերությունների ստանձնած պարտավորությունների մասին և հաղորդելով հայերին աջակցելու խնդրի հրատապությունը³:

Կոնգրեսի նիստի ժամանակ տեղի ունեցած իրադարձություններից ուշագրավ է հետևյալ փաստը. Լոնդոնի «Review of Reviews» հանդեսի խմբագիր Ուիլյամ Սթետը հայտարարել է. «Եթե հայերուն խնդիրը նկատողության առնվի և գործադրության դրվին անոնց պահանջները, անոնք մեծ կայսրություն մը պիտի հաստատեն, որովհետև ճարպիկ ազգ մըն են, և շուտով պիտի հառաջանան, տրվելիք ոյություններեն օգտվելով...»⁴: Նման տեսակետի հրապարակային արտահայտությունը վկայում է այն մասին, որ հասարակական շրջաններում առկա էին նաև նման միտումներ:

Կոնգրեսը մերժում է երկու պատվիրակությունների Հայկական հարցը քննարկման դնելու խնդրանքը՝ պատճառաբանելով, թե կոնգրեսն իրավասու չէ այն քննարկելու: Հայ պատվիրակության առարկությունը, որ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը ստորագրվել է 6 պետությունների կողմից, իսկ 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի և դրանով իսկ այն միջազգայնացվել է, չի ընդունվում⁵:

Սակայն հայկական պատվիրակությունը որոշ երկրների դեսպանների կողմից արժանանում է ընդունելության և ունկնդրության: Մասնավորապես հատկանշանական է պատվիրակության և կոնգրեսի նախագահ Ա. Նելիդովի տեսակցությունը: Ունկնդրելով հայկական պատվիրակությանը՝ նա կտրականապես մերժում է Հայկական հարցը կոնգրեսում քննարկման դնելու հայկական պատվիրակության առաջարկությունը՝ կոնգրեսի իրավասությունից դուրս համարելով այն⁶:

Հայկական պատվիրակության անդամները բողոք-դիմում հղեցին կոնգրեսի պատգամավորներին⁷ և միջազգային հանրությանը⁸:

Տարաբնույթ միջազգային խորհրդաժողովներում Հայկական հարցի քննարկման վերաբերյալ վերոբերյալը թույլ է տալիս եզրակացնելու հետևյալը.

1. համաժողովները հասարակական բնույթի միջոցառումներ էին և նրանց որոշումները իրավաբանական ուժ չունեին, այլ միայն բարոյական նշանակություն,

¹ Տե՛ս նույն տեղում, 1907, № 8, էջ 107-110, Սերոբյան Մ., Սեր պայքարը հայ ազատագրության ուղիով, վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948, էջ 213-214, «Հայկական հարց» հանրագիտարան, Ե., 1996, էջ 192:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 93, թ. 1-9:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 2-3:

⁴ Տե՛ս Սերոբյան Մ., նշվ. աշխ., էջ 213, ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 93, թթ. 4-5:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 93, թ. 4-5:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 5:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 6:

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 6 շրջ.:

2. պետք է հիշել սակայն, որ երբեմն համաժողովների կոչերն ու բանաձևերը այս կամ այն չափով ազդում էին մեծ տերությունների քաղաքականության վրա, ինչպես օրինակ՝ Խաղաղության միջազգային 11-րդ համաժողովի կոչի արդյունքում Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ավելացրեցին իրենց հյուպատոսների քանակը Արևմտյան Հայաստանում,

3. համաժողովները ունեցան խոշոր նշանակություն հայ ժողովրդի և Հայաստանի հանդեպ դրական, համակրական վերաբերմունք ստեղծելու հարցում ինչպես Եվրոպայում, այնպես էլ ողջ աշխարհում,

4. Հայկական հարցի լուծման հիմք էր համարվում Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի և Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կազմած 1895 թ. մայիսի 11-ի բարեփոխությունների ծրագրի գործադրությունը:

Арам Хачатрян, Проармянские французские деятели и обсуждение армянского вопроса в международных конференциях (1900-1907),—В начале 20-го века Армянский вопрос часто обсуждался в международных конференциях и в большинстве случаев благодаря проармянским французским деятелям, которые каждый раз смогли внести на обсуждение тяжолую ситуацию Армянского народа и предложить варианты решения Армянского вопроса. Резолюции, которые были приняты в конференциях, носили проармянский характер, хотя не имели юридической силы. Но именно благодаря этим резолюциям власти Франции и Царской России решили увеличить число своих консулов в Западной Армении.

Ключевые слова: Армянский вопрос, проармянское движение, проармянские французские деятели, международные конференции, Международный конгресс мира, Великие державы, резолюция.

Aram Khachatryan, Pro-Armenian French figures and the discussions of Armenian question in international conferences (1900-1907),—At the beginning of the 20th century, the Armenian question was often discussed in international conferences thanks to pro-Armenian French figures, who each time were able to bring forward the plight of the Armenian people and offer solutions to the Armenian question. Resolutions that were adopted in the conferences were pro-Armenian, but they had no any legal force. But as a result of these resolutions the authorities of France and Tsarist Russia decided to increase the number of their consuls in Western Armenia.

Key words: Armenian issue, pro-Armenian movement, pro-Armenian French figures, international conferences, International Peace Congress, Great Powers, resolution.